ՀԱՅՏՆԻ Է «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԳԱՎԱԹ 2019» ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂԸ (ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ)

17.06.2019 13:55

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի կողմից **«Միկա»** մարզահամալիրի ֆուտբոլի փոքր բացօթյա մարզադաշտում նախօրեին կազմակերպվել էր «**Փաստաբանների ֆուտբոլի գավաթ 2019»** մինի ֆուտբոլի մրցաշար, որին մասնակցության հայտ են ներկայացրել 34 փաստաբաններ: Նրանք ներկայացված են եղել 6 թիմերում (Հանրային պաշտպանի գրասենյակի, ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրների, «ԷՄՋԻ» լոու գրուփ, ինչպես նաև անհատ փաստաբաններից ձևավորված «Նոյ», «Արարատ», «Բարսելոնա» թիմերը):

Այդ թիմերի միջև տեղի ունեցած պայքարի արդյունքում առաջին տեղն է զբաղեցրել «Նոյ» թիմը: 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են «Արարատ» և «ԷՄՋԻ» լոու գրուփ թիմերը:

Առաջին երեք տեղերը զբաղեցրած թիմերին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը պարգևատրել է գավաթով, մեդալներով, ինչպես նաև պատվոգրերով:

Մրցաշարի ընթացքում արդյունավետություն ցուցաբերած մասնակիցներից կկազմվի ՀՀ փաստաբանների հավաքական՝ այլ հիմնարկների հավաքականների հետ մրցելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })